ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 սեպտեմբերի 2020 թվականի N 203Ա

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետով և 37-րդ հոդվածի դրույթներով ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» N384-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1.ՀՀ Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության էներգետիկայի ծառայության պետ նշանակել Արմեն Մարտիրոսյանին:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2008 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության տարահանման մարզային հանձնաժողովի կազմը և քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կառուցվածքը հաստատելու, ՀՀ Սյունիքի մարզպետի 2000 թվականի մարտի 21-ի N13-Ա և 2003 թվականի մայիսի 23-ի N24-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N51-Ա որոշման N1 հավելվածում «Ա. Գրիգորյան – ՀԷԿ ՓԲԸ «Տաթև» մասնաճյուղի տնօրեն, էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության պետ» բառերը փոխարինել «Ա. Մարտիրոսյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչություն ճարտարապետաշինարարական բաժնի պետ, էներգետիկայի ծառայության պետ» բառերով:

3.Որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետում, «էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն» բառերը փոխարինել « էներգետիկայի ծառայություն» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

07.09.2020

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117